ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՅԻՍ 1, 1894 ԹԻՒ 8

# ՀԱՅԿ

## ՀԱՆԳԷՍ

### ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

# HAIK

### AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. New York, N. Y. Vol. IV, 1894

## ՌՈՎԱՐԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին անգամ մ'ալ.— Ոչ ևս Քննադատութիւն.— Գործելու Սկզբունք.— Կարեւոր Յայտնութիւն Եոզդատի Վերջին Դէպքերուն Նըկատմամբ.— Հնչակեան Դիմախօսութիւնը.— Նամակ յԵգիպտոսէ. — Նամակ Լիոնէ. Միութիւն Լուսիբեան.— Ընկերութիւն Հայոց ի Փէթէրսըն.— Նամակ Ուստըրէ.— Միացեալ Բարեկամք Հայաստանի ի Պոսթըն.— Մեթոտիսթ Թայմզ և Հայկական Խնդիրն.— Անգլեհայկական Ընկերակցութիւնն.— Թէ Որքան Հայ կայ Միացեալ Նահանգաց մէջ.— Քաղաքատնտեսական. Գործաւորաց Վիճակն.— Հայրապետին Անդրանիկ Կոնդակն պէտք է Կարդացուի.— Այլևայլք։

## ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ Մ'ԱԼ

### ՊԻՏԻ ՍՊԱՍԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՀԱՅԿ 5րդ և 6րդ թիւերով յայտարարած է թէ անմիջական օգնութեան պէտք ունի շարունակել կարենալու համար։ Այս ամիս ու կէս ժամանակամիջոցին մէջ մեր հրաւէրին պատասխանեցին միայն չորս հայրենակիցներ, այսինքն,

| | |
|---|---|
| Լեւոն, Ուստըրէ . . . . . | 2 տոլար |
| Ֆրէզնոյէն ոմն, ի ձեռն Մեծ. Ն. ի | 1 ,, |
| Նիւ Եորքէն, ոմն . . . . . | 2 ,, |
| Ֆորթ Ուէյնէն, ոմն . . . . | 2 տոլար |

Որպէս զի չափազանց սճապարանօք չարժած և մեղադրելի չլինիմք, ներկայիս վերջին անգամ մ'ալ կը կրկնեմք մեր հրաւէրն առ այն ամեն հայրենակիցներ որք կը կարծեն թէ ՀԱՅԿ օգտակար թերթ է և շարունակուելու արժանի։ Մէկ ամիս կը սպասենք, որպէս զի ամենն ալ խորհելու և մեզ պատասխանելու ժամանակ ունենան և մենք ալ կարենամք ըստ այնմ շարժիլ։

Մեր ջերմագին բաղձանքն է թերթն շարունակել, անոր համար կ'ուզենք վերջին ճիգն ու փորձն անել որպէս զի յանկարծ ձեռնթափ եղած լինելու դատավճիռն չկրենք։

Նիւ Եորքի մէջ ազդեցիկ և հասկացող ազգայիններու խումբ մի ձեռնարկած է մեր հրաւէրն կրկնել առ համակրողս։ Մաղթենք որ այս ազնիւ տեսարց անձնուէր ջանքն պսակուի։

ՀԱՅԿԻ 9րդ թիւն ուրեմն ոչ թէ Մայիս 15ին այլ Յունիս 1ին հրատարակել ստիպուած եմք։

---

Ապրիլ 29ին կը հեռագրեն Կ. Պոլսէ Նիւ Եորք Հէրալտին—

Եոզդատի միւֆտին կախուած գտնուեցաւ անցեալ օր։ Նորա քղանչքին տեղած էին ծանօթութիւն մի թէ դա էր առաջին թերավճար հատուցումն Հայոց պարտքին առ թուրք պաշտօնեայս։ Եոզդատ մին է այն կեդրոններէն ուր մահմեդականք կը հալածեն զՀայս։

## ՈՉ ԵՒՍ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Խմբագրական չորեքամեայ փորձառութիւնն համոզեց զմեզ թէ քննադատութիւնն խմբագրի պարտաւորութեանց քան զամենայն փափուկն ու դժուարինն է։ Զարգացած ազգերու մէջ ալ դժուար է այն, իսկ մեր մէջ մանաւորապէս դըժուար։ Քննադատութիւնն բոլորովին վընասակար է երբ կրիւք և անարդարութեամբ կը փորձէ մրոտել գործիչ մի կամ խծբծել գրուած մի. զայդ ամեն մարդ գիտէ։ Բայց սակաւք գիտեն թէ նոյն իսկ արդար քննադատութիւնն միշտ օգտակար չէ։ Մեր խմբագրական փորձառութեան վերջին դասն այդ իսկ է, ինչպէս ներկայ թուոյ հնչակեան դիմախօսութեան առթիւ պարզած ենք։ Երբ կուսակցութիւն մի ոևէ պատճառաւ այն համոզման կը հասնի թէ այս ինչ թերթն թշնամի է իրեն, այս ևս նոյն թերթին բարեկամական դիտողութիւնք անդամ գրգռիչ և քրստմնեցուցիչ հանգամանք կ'առնուն, և չեն ծառայեր շինութեան և լուսաւորութեան։

«Հայք» իրեն պատիւ համարեց մինչև ցարդ անկողմնակալ և ազնիւ քննադատութեան օրինակն տալ. իսկ այսուհետև ալ իրեն պատիւ պիտի համարի հրաժարիլ նոյն իսկ մեղմ քննադատութիւններէ —լռել, զի լռութիւնն ոսկի է մանաւանդ մեր կուսակցութեանց և ժողովրդի այժմու վիճակին մէջ։

9րդ թիւէն սկսեալ «ՀԱՅԲ» պիտի լինի մանաւանդ հրահանգիչ թերթ, պահելով հանդերձ իւր ազգային քաղաքական բնութիւնն։ Քաղաքատնտեսական, առողջաբանական, գիտական յօդուածներ, ժողովրդին հասկանալի լեզուաւ, աւելի յաճախ պիտի հրատարակուին։ Տեղական լուրերու աւելի տեղ պիտի տրուի։ Եթէ ընկերութեանց ժողովներու ծանուցմունք յղուին, պիտի հրատարակուին անխտիր։

---

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետն մըտադիր է երթալ ի Բեռլէրսպուրկ այցելել Զարին։

Այլև այլ կողմերէ ի Ս. Էջմիածին նուէր յղուած են 25,610 ռուբլի, որոյ 8610 ռուպլին Վեհ. կաթողիկոսին անձնական տրամադրութեան ներքև դրած են նուիրատուք։ Այս դրամի մեծ մասն սովեալների բաշխուած է։

# ԳՈՐԾԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔ

ՀԱՅԲի 6րդ թուով Բալիֆորնիայէն գրուած նամակ մի հրատարակեցինք յորում թղթակիցն կը պատմէր թէ տեղւոյն ազգայինք, Եղկոտի կողմերուն վերջին դէպքերէն յուզուած, միաք մի յղացեր են Մեծ Տէրութեանց աղերսագիր մատուցանելու։ Նոցա փափաք որով կ'ուզեն բան մի անել յօգուտ հայ դատին, շատ գովելի է, բայց եթէ այնպիսի աղերսագիր տալով իրենց բարի փափաքն իրագործելու ձեռնարկեցին, ցարդ համոզուած կը լինին թէ աղերսագիրն ըստ պատշաճի պատրաստել դժուար է, և այլ և այլ նահանգներէն Հայոց ստորագրութիւններն առնուլ շատ աւելի դժուար և երկարաձիգ գործ է։ Նաև խօլ նախադուշակութիւն չէ կարծել թէ այնպիսի աղերսագիր մի չի զօրեր մեծ պետութիւններն ի գործ շարժելու. նոքա իրենց առջեւ եռացող, սպառնալից խնդիրներ ունին որովք կը տագնապին, և բանաւոր չէ յուսալ թէ մեր աղերսագրին աւելի քան վայրկենական և յոգնած ուշադրութիւն ընծայեն։ Այդ պայմանաց մէջ աղերսագիր տալ՝ այժն ի զուր վատնել է։

Այս խօսքով մեք բնաւ չեմք ուզեր մեղադրել մեր Բալիֆորնիոյ հայրենակիցքն, զի մեք բոլորս ալ արդէն նոյն ճամբուն մէջ եմք, և մեր ուժերն ըստ արժանւոյն գործածել նոր կը սովրիմք։ Մեր, իբրեւ ազգ, խակութեան յայտնի նշաններէն մին այն է որ կը սպառեմք անգործ մինչեւ որ մեր զգացումներն չարաչար վիրաւորեն թշնամիք, մինչև որ արդար դայրոյթ բորբոքի ի մեզ, յայնժամ գրգռուած ոգի կ'ելնեմք և անհուն փափաքով կ'ուզեմք մեծ բան մի անել, այնպիսի բան մի որով մեր հայրենեաց վիճակն իրական և կարեւոր դարման ընդունի։ Կ'ուզեմք, օրինակի համար, որ աղերսագիր մի տամք, կամ պատրիարքն տայ, և այնպիսի աղերսագիր որով մեծ տէրութիւններն չարժեմք Հայկական Խնդիրն ձեռք առնլու և լուծելու։

Այս կը ցուցնէ թէ մեք Հայերս քաղաքական գործերու մէջ դեռ հասուն հասկացողութիւն չունիմք։ Գրգռմամբ միայն

կը գործեմք ոչ թէ սկզբամբ։ Եւ որովհետև գրգռին բնութեան մէջ է վաղանցիկն լինիլ, մեր ալ գործունէութիւնն այսօր կը սկսի և վաղիւ կը վերջանայ գրգիռին հետ։ Բայց եթէ հասուն խելք բոլորել սկսիմք, հանդարտութեամբ, հաչուով կը ձեռնարկեմք գործի, և յարատև ջանքով յառաջ կերթամք։

Մեծ գործ կատարելու համար մեծ ոյժ պէտք է. և մեծ ոյժն ալ կամաց կամաց, կրթութեամբ կը գոյանայ։ Պզտիկ գործերու մէջ վարժուած ոյժն է որ քիչ մ'աւելի մեծին ալ կը բաւէ, և աստիճանաբար աճելով կը լինի ահագին։ Հազար փաունտ ծանրութիւն վերցուցող ուժեղ մարդ կայ, բայց քանի՞ տարի կրթած մարդած է նա ինքզինք աւելի փոքր ծանրութիւններ վեր առնելու, մինչև որ աստիճանաբար կարող եղած է հազար կամ հազար հինգհարիւր փաունտ բառնալու։ և յայտմ հրաշալի բան չկայ։ Ցարատեւ կրթութիւնն ուրիշ կերպով չի բերեր ոյժ բայց եթէ կրթուողին մարմինն փոխելով, մսերն զարգացուցնելով, գործող դնդերներուն թելերն բազմապատկելով, այնպէս որ ոյժն հրաշալի կերպով չի հանգչիր նորա բազկաց մէջ այլ մսերուն և ջղերուն մէջ մարմնացած է։ Ճիշդ այդպէս է նաև բարոյական կրթութիւնն։ Գործի մէջ մրցանելով և երկար տարիներ աշխատելով մարդս կը փոխուի, կը զարգանայ, խորհուրդներն կ'առատանան, կը խորանան, գաղափարներն կը բազմապատկին, զգացումներն կը սրին որ կը նրբանան, մարդիկ և իրեր տեսնելու և ճանաչելու կարողութիւնն կը զօրանայ, և այսպէսով նա աւելի ու աւելի մեծ գործ կատարելու ներքին ոյժ կը ստանայ։

Այս կամ այն գործն անելով, իբրեւ հմայիւք, չեմք կրնար աղգն փրկել. պէտք է գործունէութեան երկար, յարատև, աճեցուն ընթացքով փրկեմք հայրենիքն։ Ինչ որ այսօր կ'ուզեմք անել, թերևս փոքր բան է, բայց փութով և եռանդով անեմք, որպէս զի վաղիւ աւելի մեծն կատարելու ոյժ ստացած լինիմք։

Երբ ընկերութիւն կազմեմք, կը մըտածեմք թէ պէտք է նպատակն գրաւիչ և փայլուն լինի, որպէս զի անդամ դասունենանք։ Թապրիզի մէջ երեք տարի առաջ ընկերութիւն մի կազմեցին ոմանք Հայաստանի մէջ դպրոցներ բանալով կըրթութիւն տարածելու համար. յայնժամ «Մշակ» խրատ տուաւ որ այդքան հեռուն և այդքան մեծին ձեռք երկնցունելէ առաջ՝ նոյն իսկ Թապրիզի մէջ բուն իրենց զաւակաց համար շնորհքով վարժարան հաստատելու մէջ փորձեն իրենց ոյժ։

Ընկերութեան մի դիմացկունութիւնն իւր նպատակին մեծ և փայլուն լինելէն կախուած չէ, այլ արդիւնաւորութենէն։ Անդամք կը քաջալերուին և կը տաքնան երբ տեսնեն թէ արդէն իրենց ընկերութիւն փոքր ի շատէ օգտակար կը լինի, պզտիկ գործ մի կ'անէ, սահաւիկ ինչ նըպաստ կը մատուցանէ ազգային լուսաւորութեան։ Անդամք կը հոգնին, ընդհակառակն, եթէ միայն ամսավճարներն հաւաքեն ապագայ առթիւ գործածելու մտօք։ Ներկային մէջ գործածէ ինչ որ կրնաս, որպէս զի թէ՛ դու կրթուիս գործելով և թէ ընկերութիւնդ ամուլ չմնայ ապագայ յաղթ ծննդաբերութեան մի ակնկալութեամբ։

Ինչպէս որ մինչև բարկութեան վայրկենին անգործ սպասել սխալ է, նոյնպէս սխալ է գործի սկսելու վայրկեանէն ձեռքն մեծ քարի երկնցունել։ Կրթութեան առաջին օրէն հազար փաունտ վերցուցելու փորձն կրնայ ծառայել զմեզ հաչմելու միայն։ Աճապարանքն վտանգաւոր է։ Հիմնական պատրաստութեանց ժամանակ պէտք է տալ։ Հիմն է որոյ վերայ փառաւոր և բարձր շէնքն կրնայ կառուցուիլ, բայց հիմն ինքն խորն է, աչքի չերեւիր։ Բնութիւնն ալ նախ արմատն կը կազմէ հողին մէջ, ի ծածուկ, և ապա զբուն և զճիւղեր դուրս կուտայ։ Մեր ալ ներքին պատրաստութեան գլխաւոր մասն է իմացական և բարոյական մշակութիւնն, ընթերցմամբ, ժողովներով, և գործնական ծառայութիւններ ըստ կարի մատուցանելով։ Սակաւք հասկացած են մեր մէջ թէ գաղափարն ոյժ է, և թէ ճշմարիտ գաղափարն փրկաւէտ գործի կը փոխուի։ Զեռքն չպարտի քան զգլուխն աճապարել. անհատ և ընկերութիւն պէտք է նախ գլխով ըմբռնեն, հասկանան ինչ որ ձեռօք գործել կ'ուզեն։ Դժբաղդաբար մեք տակաւին բաւական յարգ չեմք ընծայեր լուսոյ, գաղափարի, և գաղափարաց մշակի։ Մեք կը վարուիմք այնպէս որպէս թէ մամուլն, թերթն շռայլութիւն լիներ, որպէս թէ միւք մշակող խմբագիրն օդն

ծեծող ցնորեալ մի լինէր։ Ոմանք կը պոռան թէ գործ պէտք է, խօսքէն ի՞նչ կ'ելնէ. և սակաւք միայն ըմբռնած են դեռ թէ խօսքէն կը ծնի գործն, թէ գաղափարն զօրութիւն է,— թէ խօսքն ու հասկացողութիւնն աւելի առաջ պէտք է լինի քան գործն կամ գործադրութիւնն։

Գործելու ուղիղ սկզբունքն է բնական կարգին հետեւիլ. պարզէն սկսելով երթալ բարդին, ցածէն բարձրին, դիւրինէն դժուարին, ներքինէն արտաքինին, արմատէն բնին։

Եւ ասաց Աստուած Եղիցի լոյս։ Նախ և յառաջ լոյս պէտք է նոր ստեղծագործութեան համար, Հայրենիք վերաստեղծելու համար։ Նախ լոյս, խելք, տեսութիւն, գաղափար, անկէ յետոյ կրնաս գործել, շարժիլ և շինել։

## ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

### ԵՈԶՂԱՏԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Անգլիական Սփիքըր թերթին Կ. Պոլսէն ուղղեալ նամակն կարեւոր մի քանի կէտեր երեւան կը բերէ Եոզղատի վերջին խռովութեանց ծագման և ընթացքին վերաբերութեամբ։ Եոզղատի գիւղերէն միոյն մէջ կառավարական հայ լրտես մի սպաննուած լինելով ի ձեռն ռուսահայ յեղափոխականի ուրումն, կառավարութիւնն ձերբակալեց գիւղին բոլոր այր մարդիկն և տարաւ Եոզղատ։ Գիւղին մէջ մնացած չորս ոստիկաններն ամէն նախատինք անամօթաբար գործեցին գիւղին հայ կանանց վերայ, որք Եոզղատ դիմեցին խմբովին, չու առին շուկային մէջ և կոչեցին Հայերն լուծել իրենց պատուոյ վրէժն։ Ոմն եկեղեցւոյ զանգակն հնչեցոյց և Հայոցմէ ստուար թիւ մի փակելով կրպակներն ժողովեցան եկեղեցւոյն մէջ խորհրդակցութեան համար։ Քաղաքին զինուորական հրամանատարն լսելով ճեպեց յեկեղեցին ուր ջանաց հանդարտել ժողովուրդն և համոզել որ ցրուին, վստահացնելով զնոսա թէ յանցաւոր պաշտօնեայքն պիտի պատժուէին։ Փոքր ի շատէ յաջողելու վերայ էր նա երբ կառավարչին կողմանէ յղուած զօրքերն հասան։ Այս աճեցոյց գրգռումն յայնպիսի աստիճան որ գնդակներ փոխանակուեցան երկուստեք և ոմանք սպաննուեցան և վիրաւորուեցան։ Եկեղեցին պաշարեցին, շատերն ձերբակալեցին։ Կ. Պոլսէն Ցանձնաժողով մի յղուեցաւ ի քննել, և արդիւնքըն այն եղաւ որ արհաւիրք թագաւորեցին քաղաքին վերայ։ Բոլոր Հայոց տներն խուզարկելու պատրուակաւ կողոպտեցին և անգթօրէն նախատեցին, շատերն բանտարկեցին և տանջեցին որ իրարու դէմ վկայութիւն տալու ստիպեն։ Հազար մարդ, քաղաքին լուսաւորչական եպիսկոպոսն և բողոքական երէցն ալ ի համարի լինելով, աղերսագիր յղեցին մեծ Վէզիրին և պատմեցին ինչ որ կրած էին ի ձեռս Ցանձնաժողովին, բայց նոցա աղերսագիրն մերժուած էր, և այժմ կատարուելու դատավարութեան մէջ նոքա պիտի ճմլուին։

Թղթակցին այս տեղեկութիւններն կը ցուցնեն թէ Եոզղատի հայ ժողովուրդն սկիզբէն ի վեր փարուած է իմաստուն օրինաւորութեամբ և հազուագիւտ քաջութեամբ միանգամայն։ Թուրք կառավարութիւնն է սկիզբէն ի վեր յանցաւոր, անարդար, բռնաւոր և պիղծ, իսկ Հայերըն, առաջին սոսկալի և արդար զայրութին մէջ իսկ փարուած են խոհեմութեամբ, եկեղեցւոյն մէջ խորհրդակցելու են գնացեր, և յետոյ ալ աղերսագրով դիմած են Վէզիրին։ Ուրեմն այս յուզմանց մէջ հայ յեղափոխականաց կողմանէ յատուկ ջանք ի գործ դրուած չէ, շարժում եղած չէ, այլ նոյն ինքն Թուրք չարադեւ և պղծամիտ պաշտօնեայք են որ գրգռած են Հայերն պղծելով Հայ կանայքն, և ապա ալ Ցանձնաժողովոյ վատթարագոյնն Պոլսէն գնացեր է լրումն տալու նոյն պղծութեանց և հարստահարութեանց։ Հայոց յուզումն, բարկութիւնն, ժողովումըն, աղերսագիրն, կրակելն, ամէն գործըն յայտնի և անտանելի պաշտօնական անիրաւութեան դէմ է, և բոլոր քաղաքակիրթ աշխարհ պարտաւոր է նոցա իրաւունք տալ Թրքին դէմ։ Հայոց այդ շարժմունք արդարութեան ազնիւ կիրքէն յառաջ եկած և հարստահարիչ Թուրք պաշտօնէից դէմ եղած են։ Ցայդ ոչ յեղափոխական կայ, ոչ ապստամբ, այլ իրենց պատուոյ զգացմանցն մէջ վիրաւորեալ քաղաքացիք են որ արդարութիւն կը պահանջեն և, ըստ վերջնագոյն հեռա-

գրի մի, կախած են իսկ Թուրք միւֆթին։

Նոզղասի յուզմանց այս պարագային վերայ չատ պնդեցինք ցուցնելու համար թէ Հայոց չարժումն ինքնին եղած է առանց արտաքին գրգիռի և ոչ խռովութիւն յարուցանելու յատուկ նպատակաւ. ժամանակ առաջ Հայ Քրիստոնէից կողմէն առ Քրիստոնեայս Ամերիկայի ուղղեալ ուղերձի մի մէջ հետեւեալ տողերն կային— «Մեր ժողովուրդ, գիտնալով թէ Եւրոպա ուշադրութիւն չպիտի մատուցանէ իրենց եթէ խռովութիւն չյարուցանեն, կրկին և կրկին ապստամբած են առ անդ, յընթացս վերջին հինգ տարիներու և պարզապէս ջարդուած են։» Այս խօսք առանց մտածելու գրուած է անշուշտ, զի քոյժ կը տկարացունեմք մեր դատն եթէ այնպէս կարծել տամք Եւրոպիոյ թէ մեր հայրենակիցք խռովութիւն կը յարուցանեն կամ կ՚ապստամբին Եւրոպիոյ ուշադրութիւնն գրգռելու համար։ Ո՛չ, ո՛չ, մերայնոց չարժմունք հաշուեալ չեն այլ անտանելի, անհանդուրժելի անիրաւութեանց դէմ եղած բնական, ինքնադէպ չարժումներ են։

---

### ԱԺԱՆ ԳԻՐՔ

Ապրիլ 1էն մինչև Յունիս 30, 1894, հետեւեալ գրքերն կը վաճառուին զեղջեալ գներով որպէս ի ստորև—

«Հայք»ի Ա. տարին 1 տոլար կամ 5 Ֆր.
,, Բ. ,, 1 ,, ,, ,,
,, Գ. ,, 1 ,, ,, ,,

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ 50 սէնթ կամ 2 Ֆր. ու կէս։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, որոյ գինն է 10 սէնթ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱԻԱՆԱՆՔ որոյ ևս գինն է 10 սէնթ, եթէ 5 օրինակի գինն մէկէն կանխիկ վճարէ ոք (այսինքն 50 սէնթ կամ 2 Ֆր. ու կէս), կը ստանայ ուրիշ հինգ օրինակ ալ ձրի։

«Խրիմեան Հայրիկ» և «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատութիւններէն սակաւաթիւ օրինակներ միայն մնացած լինելով, սովորական գներով կը վաճառուին։

## ՀՆՉԱԿԵԱՆ ԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

### Ա.

Մ. Մանուազ, հնչակեան, Ուուստըրէն ուղղած է մեզ նամակ մի որով կը ջանայ ցուցնել թէ Հնչակեան կուսակցութիւնն բռնաւորութեան մէտ չէ, և թէ ոչ-հընչակեաններն վասակ կոչուած չեն ի ժողովի, որպէս յիշուած էր «Հայք»ի Դդ թուով։

Մ. Մ. կ՚ասէ, «եթէ իսկապէս ձեր հաստատ համոզումն այն է թէ ռուսահայ գործիչք մի տեսակ բռնութիւն կամ ճնշում իր բանեցունեն կամ այդպէս անել կ՚ուզեն և նրանց հետեւողներն էլ կը հպատակին, դա մի ակներեւ սխալ է, և ոչ թէ թեւ մի զրպարտութիւն է։»

Քննադատական և վիճաբանական յօդուածներու յաճախութիւնն անախորժ է մեզ, բայց հարկ է որ մեր հնչակեան եղբօր այս դիտողութիւնն ի նկատ առնունք ի խրատ և ի զգուշութիւն իւր, որպէս զի աւելի խնամով և աւելի խոհուն տրամաբանութեամբ դրէ երբ նորէն գրիչ ձեռք առնու։ Պէտք է ինքն գիտնայ նախ թէ «զրպարտութիւն» արած չեմք լինիր եթէ մեր «հաստատ համոզումն» յայտնած լինիմք, ուստի և պէտք է չատանար «դա մի սխալ է» ասելով և չյաւելուր «զըրպարտութիւն» բառն, որ սուտ ամբաստանութեան միտք կուտայ։ Նաև եթէ ինքն ուշադրութեամբ կարդացած լինէր մեր յօդուածն, պիտի տեսնէր թէ մեք ասած չեմք ինչ որ ինքն մեզ կ՚ընծայէ— թէ ռուսահայ գործիչք բռնութիւն կամ ճընշում կը բանեցունեն իրենց հետեւողներուն վերայ։ Մեր ասածն սա է թէ Հընչակեանք, առաջնորդք և հետեւողք, առ հասարակ բռնաւոր և անթոյլատու վարմունք կը ցուցնեն հանդէպ ոչ-հնչակեանց։

Մեր այս համոզում հիմնեալ չէ լոկ այդ դէպքի վերայ զոր Շիքակոյէն հաղորդած էին մեզ. աստ ի Նիւ Եորք ալ դիտուած է այդ երեւոյթ։ Հնչակեան ժողովի ներկայ գտնուող հիւր մի կը հրաւիրուի խօսիլ, բայց ձաղաքավար պատուէր կը տրուի որ Հնչակեանց դէմ դիտողութիւն չանէ. ճիշդ այդ փորձառութիւն ունեցող ոմն մեզ անձամբ պատմեց թէ որ-

պիսի դժուարութեամբ կրկին և կրկին ծամծամելով կուլ տուաւ կարեւոր դիտողութիւններ զորս յընթացս իւր ատենախօսութեան անելու առիթ ունեցած էր և սակայն չէր համարձակած ի բան բերել։

Հնչակեանք իրաւունք ունին իրենց ժողովոց մէջ ամեն մարդու խօսք չտալու, քանզի ոմանք կրնան անհեթեթ խօսքերով յարձակիլ և խռովութիւն յարուցանել, բայց երբ հիւր մի կը հրաւիրեն խօսելու, պէտք է վստահութիւն ունեցած լինին նորա արժանիքի և անկեղծութեան մասին, և ուստի չպահանջեն որ իւր համոզմանց այն մասն խօսի որ Հնչակեանց պատիւ կը բերէ, և լռէ այն մասն որ նոցա աննպաստ է։ Դարձեալ այն եզրակացութեան կը յանգիմք թէ Հնչակեանք այն մոլեռանդ հաւատքն ունին թէ ամեն ինչ որ իրենք կը խօսին՝ ճշմարիտ է և ամեն ինչ որ իրենք կը գործեն՝ արդար է, ուստի և իրենք անքննադատելի են, և ով որ իրենց դէմ ոևէ քննադատութիւն անէ, կամ տգիտութենէ կա՛մ կոյր կրքէ յառաջ եկած լինելու է։

Հնչակեանց այդ մոլեռանդ անթոյլտուութիւնն իրենց պատիւ չիբերեր և մեք անկեղծօրէն կը բաղձամք որ այդ մասին իրենց ընթացքն բարեփոխեն։

Բ

Տիար Գ. Պ. Զիթճեան, ջերմեռանդ Հնչակեան, Պոսթընէն ուղղած է մեզ մի նամակ որով կը հնարի ցուցնել թէ ՀԱՅՐի 7դ թուոյ մէջ Հնչակեան կուսակցութիւնն զրպարտած եմք։ Երկուք են զբրպարտութիւնք, նախ Խրիմեան Հայրիկի առթիւ և երկրորդ տարակարծիք գործիչներ սպաննելու առթիւ։

Տիար Զ կը գրէ մեզ «կը ցուցնէք թէ Հնչակեանք իրենց կարող և անձնուէր գործիչներէն զոմանս կարծեաց տարբերութեան համար կը սպաննեն և սպաննած են։»

Ո՛չ, մեք այդպէս չեմք ասած։ Կէրէքցեանի նահատակումն ի կարին ի ձեռն ռուսահայ գործիչներու յիշած եմք, բայց ընթերցողն յայտնի կը տեսնէ թէ այդ սպանութիւնն Հնչակեանց չեմք ընծայած, այլ ուրի՛շ ռուսահայ յեղափոխականներու։

Սմեն մարդ գիտէ թէ Հնչակեանք ալ ուրիշ դաւառաց մէջ սպաննեցին ոչ սակաւ Հայեր, որոց մէջէն մեք անձամբ կը ճանաչէինք միայն մէկ անձ, Արաբկերցի փաստաբան Եպրճեանն, որ Հնչակեանի ուրումն կողմանէ մեզ տրուած տեղեկութեան համեմատ, տեղեկագիր յղած է եղեր ի Կ. Պոլիս՝ պատմելով Հնչակեան յեղափոխականաց չարժումներն յԱրաբկեր։ Այդ տեղեկագրութեան համար նա մահուան արժանի դատուած է։ Հաւանական է որ Հնչակեանց չարժումներն Եպրճեանի ձախող, ազդափաս երեւցած լինին, և նոցա դէմ գործել ուզած լինի այդ տեղեկագրութեամբ։ Զեմք գովեր զԵպրճեան այդպիսի տեղեկագրութեան համար, բայց չեմք ալ կարծեր թէ նա այդ պատճառաւ սպաննուելու արժանի էր։ Այսու ամենայնիւ մեք 7դ թուոյ մեր յօդուածին մէջ զԵպրճեան յանուանէ չյիշեցինք, հայրենասէր չկոչեցինք կամ կէրէքցեանի հետ բաղդատել չուզեցինք, քանզի չէր նա կէրէքցեանի պէս հայրենասէր, թէև ոչ ալ վատ և գծուծ ոք էր։ Հնչակեանց ձեռքով ուրիշ սպաննուածներու վերայ ալ որոշ տեղեկութիւն չունենալով մեք զգուշաւոր լեզուաւ սապէս ասել բաւ համարեցանք—«կարող չեմք ասել թէ արդեօք ո՞րպիսի մարդիկ էին, կամ թէ բնաւ անկեղծ մարդ ու հայրենասէր չկա՞ր անո՛նց մէջ և ուրք Հնչակեանց կողմանէ սպաննուեցան ի Թուրքիա այլև այլ ժամանակ ու տեղ։» Տիար Զ անիրաւ է մեր այս հարցական և զգուշաւոր խօսքերուն տեղ դնելով իւր վերոյիշեալ վճռական և այլայլեալ խօսքն՝ իբր թէ մեք ասած լինեինք թէ «Հնչակեանք իրենց կարող և անձնուէր գործիչներէն զոմանս կարծեաց տարբերութեան համար կը սպաննեն և սպաննած են։»

Զ մեր յօդուածի մէջ երկրորդ զբրպարտութիւն մ'ալ «Հնչակի» դէմ գտած լինիլ կը կարծէ և կը հարցնէ թէ Հնչակի մէջ «Հայրիկի ո՞ր արժանիքն և ո՞ր վարկն ստորնացուցուած է։»

Հնչակ 1893ի 11 և 12 թուով յիշելով Հայրիկի ուղեւորութիւնն, ասաց թէ «նրա փափաքը վերջապէս իրագործված էր, նրա ճառերն առաս էին. թէև, ճիշդ է, միանման, մի քանի շրջիւն մաքերից ու նիւթերից ուրիշ ոչ ինչ առանձին չպարունակող, չչափած հասարակական հարցերի մասին ոչինչ որոյն ու որոշ լուսաբանութիւն չտվող։» 1894ի 1և2 թուով ասաց. «Հրատարակուեցաւ կաթողիկոսա-

կան ուշացած անդրանիկ կոնդակը, որին հասարակութիւնը սպասում էր մեծ անհամբերութեամբ և յոյսերով։ Շատ հետաքրքիր ենք իմանալ թէ այդ հասարակութիւնն ի՞նչ թթու կերպարանք ստացաւ կոնդակի ընթերցումից յետոյ։...Կաթողիկոսը, ստանձնելով իր պաշտօնը, իբրեւ խիստ պատասխանատու մի պաշտօնեայ, պարտաւոր էր իր անդրանիկ կոնդակում յայտնել թէ ինչ ընթացքի պէտք է հետեւէ, որոնք են իր անելիք գործերն ու նախագծերը, ինչո՞ւմ է և ի՞նչպէս է հասկանում ինքն իրեն դերն, իր պարտաւորութիւններն, և այլն։»

Մեր պարզամիտ ընդդիմաբան ուրեմն կը կարծէ՞ թէ ինքն կը հասկանայ ինչ ասել է քննադատութիւն, եթէ վերոյիշեալ խօսքերն քննադատութիւն չեն յաչս իւր։ Հայրիկ իրաւ պարտաւո՞ր էր իւր անելիք գործերն ու նախագծերն յայտնել ի կոնդակին, այդ յոյժ փափուկ բան է, և մեք չեմք կարող ասել թէ ի դէպ էր յայտնել։ Սակայն յայտնի է թէ Հնչակի աչակերտք երկու բանին մէկն պիտի կարծեն—կամ այն է թէ Հայրիկ իւր անելիք գործերուն վերաբերութեամբ ուղղութիւն և նախագիծ չունի, կամ այն է թէ նա կոնդակ մ'իսկ ըստ արժանւոյն գրել չգիտէ։ Այս կարծիքներու ո՞րն պատիւ կը բերէ Հայրիկին։

Ցիշեցէք թէ Հայրիկ առաջին Հայն եղաւ բուն Հայաստանի ժողովուրդն լուսաւորելու համար անոր խորքն մտմուլ հաստատելու, թերթ հրատարակելու, վարժապետանոց և թանգարան հիմնելու։ Նորա յաւիտենական փառքն է այդ և նա է մեր ժամանակակից հայրենասէր գործիչներու. ճշմարիտ գլուխն ու առաջնորդն։ Թէ այս իւր ծեր հասակին մէջ որքան գործ անել պիտի զօրէ, դժուար է նախագուշակել, բայց դատելով իւր անցեալ գործունէութենէն, կը յուսամք թէ կարեւոր ծառայութիւններ մատուցանել պիտի յաջողի։ Մեր ամենուն պարտաւորութիւնն է օգնել իրեն, և ազգին յօգուտ գործածել իւր անհուն ժողովրդականութիւն։ Հայրիկ ինքն ալ չուզեր որ ժողովուրդ յուլանայ՝ կաթողիկոսէն սպասելով հրաշագործութիւններ. և Հնչակ աւելի արդար և աւելի իմաստուն ուղղութեան հետեւած կը լինէր եթէ կոնդակին վերայ երեսն թթուեցուցնելու փոխանակ նոյն իսկ այդ կոնդակն գործածէր ցուցնելու թէ Հայրիկ ալ կը հրաւիրէ ամեն անհատ իւր անհատական պարտքի բաժինն կատարելու։

Մեզ պարտաւորութիւն համարեցանք դիտել տալ թէ Հնչակեանց ռուսահայ առաջնորդք չեն գիտեր հայ ժողովրդին կրօնական և ազգային զգացմանց համակերպել իրենց ընթացքն, և թէ այդ կուսակցութեան տաճկահայ հատուն անդամոց անկ է ջանալ այդ մասին խորհուրդ և զգուշաւորութիւն ներշնչել իրենց ընկերվարական պետերուն։ Մեր այս դիտողութիւն բարեկամական էր, բայց ահա երկուքն այդ թրքահայ հնչակեանց կը յարձակին մեր վերայ իբրեւ կեղծ և դիմակաւոր բարեկամի, և մին, Զիթճեան, կը յանդգնի ասել թէ մեր այս դիտողութիւնք «անլուր և քստմնելի զրպարտութիւնքե՞ր» են։

Եթէ Դուք, Պարո՛ններ, զորս բանիմաց թրքահայ հնչակեաններ կը համարէիք ես, այդպէս կը կարդաք, կը հասկանաք և կը մեկնէք զՀԱՅՐ, ալ ես ինչո՞ւ ձեզ խօսք կ'ուղղեմ։

Արդէն համոզուած էի թէ խիստ քննատատութիւնն—որպէս արի անցեալ տարի— օգուտ չեղաւ ձեզ. այժմ կը համոզուիմ թէ մեզմ քննադատութիւնք ալանօգուտ են, զի ձեր կարմրած աչքերուն «քստմնելի զրպարտութիւններ» կ'երեւին անոնք։

ՀԱՅՐ բարեկամական դիտողութիւն անոնց միայն ուղղել ի դէպ կը համարի որք կը հաւատան իւր անկեղծութեան։ Ուրեմն այսուհետեւ ձեր կուսակցութեան մասին ես ՀԱՅՐ լռութիւն պիտի պահէ։

---

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

# ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

### Ի Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԷ

«Հայք»էն ինչ ինչ փոփոխութեամբք հանուած այս ուսումնասիրութիւնն կը ծախուի 10 սէնթի։ Հինգ օրինակի գին կանխիկ վճարողն 10 օրինակ կը ստանայ այսինքն հինգ օրինակ ալ ձրի։

# ՀԱՅՔ

## ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "HAIK" 139 West 22nd St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Փրանք
կանխիկ


## ՆԱՄԱԿ ՅԵԳԻՊՏՈՍԷ

Գահիրէ, Ապրիլ 10, 1894

Տէ՛ր Խմբագիր,

Բերկրութեամբ կ'իմացունեմք Ձեզ թէ հոս Հայ Տիկնանց Խնամակալութիւն մի հաստատուեցաւ ընդ ատենապետութեամբ Տիկին Սերվարդ Մկրտիչեանի՝ որոյ պաշտօնն է աղջկանց վարժարանի հոգաբարձութիւնը։

Խնամակալութիւնը արդէն սկսած է գործի ու գոհ չմնալով միայն բարոյական միջոցներէ՝ ձեռնարկած է նաև նիւթապէս ևս մխիթարել վարժարանի աղքատիկ սանուհիներն Ս. Զատկի առթիւ ըզգեստ պատրաստելով նոցա։

Խնամակալութիւնը հրաւէրներ ղրկեց մի քանի երևելի ծնողաց օրիորդներու, որոնք ընդունելով խնամակալութեան հրաւէրն՝ սկսած են այժմ քանի մի օրերէ ի վեր վարժարանի մէկ սրահին մէջ չափել, ձևել ու կարել այս զգեստները, անձամբ վարժուելով այսպէս գթութեան և բարեգործութեան։

Քաղաքիս հայ տիկնանց և օրիորդաց այս ազնիւ և առաքինի ընթացքն գործնականապէս ցոյց կուտայ թէ նոքա այլևս որոշած են ապրիլ ժողովրդի մէջ, ժողովրդի հետ ու ժողովրդի համար. թէ նոքա աննման իրենց նախորդաց՝ հաստատապէս ի մտի ունին այլևս թաղել հիջելափառ անցեալն և ապրիլ ներկային մէջ արթուն ու կենդանի։ Առ այս վսեմ նպատակ կը մաղթեմք յարատև ջանք և հաստատամիտ ոգի։

Իցի՛ւ թէ Գահիրէի ուրիշ ազգի կանայք ևս՝ Ղպդուհիք և Քաղդէուհիք՝ որ դեռ պասուհաններու վանդակներու տակէն կը դիտեն իրենց հայ քոյրերու այս կրթասիրական և բարեգործական խանդն ու եռանդն, սթափէին իրենց խոր թմրութենէ և նմանող լինէին իրենց քերց օրինակին։

## ՆԱՄԱԿ ԼԻՆԷՆ

Լին, Մէս, Ապրիլ 17, 1894

Մեծ. Խմբագիր ՀԱՅՔի,

Կը բաղձամ տեղեկացնել ձեզ և ձեր ազգօգուտ թերթի միջոցաւ արդոյ հայ հասարակութեան քաղաքիս մէջ վերջերս հաստատուած մի ազգային ընկերութեան վերաբերութեամբ։ Սոյն նորակազմ հայկական կազմակերպութիւն հաստատեալ է լաւ հիմանց վրայ և կը կոչուի ՄԻՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ իւր մասնաճիւղերով։ Միութիւնն ազգային գործունէութեան մասին ուղիղն և ճշմարիտն փնտռելու ծարաւի է և անդամք մեծ եռանդ և աշխոյժ ցոյց կուտան այս ուղղութեամբ յարատևելու։ Ժողովի որոշմամբ կը յղեմք ձեզ ևս միութեան կանոնագրութիւնն որով պիտի կարողանաք հիմնական գաղափար կազմել միութեանս գործունէութեան ծրագրի մասին։ Հաճեցէք զայն մասամբ հրատարակել։ Միութեանս ուղղեալ թղթակցութիւնք պէտք է կրեն հետևեալ հասցէն—Միութիւն Լուսինեան

P. O. Box 58, LYNN, MASS.

Ի դիմաց ժողովի

Ս

### ՄԻՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Ա) Միութեանս նախնական նպատակն է եռանդեամբ գործել և աշխատիլ ի փրկութիւն մեր հայրենեաց՝ հայթայթելով ազգի ճգնաժամին համար դրամ, նաև ամենահարկաւոր միջոցներն, և գործածելով զայնս հայազգի փորձառու՝ քաղաքագէտ և դիւանագէտ անձանց խորհրդակցութեամբ։

(Բ) Իսկ երկրորդական նպատակն է նախնականին այժմէն մասնակի իրագործումն, բարոյականի և նիւթականի ամենահարկաւոր պատրաստութեանց սկսելով անյապաղ։

Այս նպատակ պիտի մնայ անփոփոխելի։

—ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ. Միութիւնս գլխաւորապէս նպատակ ունի ցարդ տեսնուած ազգային ընկերութեանց և կազմակերպութեանց ամենուն փորձառութենէն օգուտ քաղելով ճիշդ թափել նախ— ազգային ապագայ յոյժ կարեւոր պիտոյից համար հայթայթելու՝ դիզելու և ամբարելու այն զօրութիւնն որ կը կոչուի ԴՐՐԱՄ, և երկրորդ—այժմէն զայն մասամբ գործածելու ամենէն խոհական և զգուաւոր ծրագրով, ընդ խորհրդակցութեամբ մեր հայ դիւանագիտաց՝ եփուն ու փորձառու անձնաւորութեանց և բարձրատիճան գործչաց։

Միութեան գանձն պիտի մնայ ապահովեալ մի դրամատան մէջ ձեռամբ մի գանձապահ մասնախմբի, և այն գանձի մէկ երրորդն միայն այժմէն պիտի գործածուի հարկաւոր և էական նպատակաց համար անդամոց մեծամասնութեան հաճութեամբ։

Միութիւնս չպիտի միանայ ոեէ կուսակցութեան և պիտի գործէ անկախօրէն օգնելով և աջակցելով նոցա ի պահանջել հարկին։

Միութիւնս կ'ունենայ առանձին կամ հրապարակային կանոնաւոր ժողովներ, հանդէսներ և նպատակայարմար գումարումներ՝ ընդ տնօրինութեամբ Գործադիր ժողովի։

Միութիւնս չպիտի համարուի լուծեալ եթէ ունենայ գէթ հինգ անդամներ, իսկ հակառակ պարագային անդամք պարտին Միութեան դրամն յղել առ Էջմիածնայ կաթողիկոսական աթոռն՝ պահելու և գործածելու ճիշդ վերոյիշեալ նպատակաւ։

---

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

## ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

## Ի ՓԷԹԷՐՍԲԷՆ

### «ՑՈՅՍ ՑԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ»

Նիւ Եորք, Ապրիլ 17, 1894

Տէր Խմբագիր,

Մեծապէս ուրախ եմ որ պատահմամբ այս վերոյիշեալ մանուկ ընկերութեան առաջին տարեգլխոյ առթիւ ունեցած ժողովին ներկայ գտնուելով տեսայ անոր յառաջդիմութիւնն։

Ապրիլ 7 Շաբաթ իրիկուն էր երբ Փէթէրսբէն այս ժողովը տեղի ունեցաւ, և չատ մը ճառեր և ոգելից ոտանաւորներ կարդացուելէ վերջը, քաջալերական էր տեսնել թէ իւրաքանչիւր անդամ ընկերութեան օգտին համար մէկ մէկ գումար նուիրեցին, որ ներկայ եղող ութ անդամներէն 36 տոլարի փոքրիկ գումար մի յառաջ եկաւ։

Իրաւի չատ զարմանալի և ուրախալի էր տեսնել թէ այսպիսի անգործութեան ատեն մի որ, սթրայքի պատճառաւ գրեթէ բոլորն ալ շաբաթներով պարապ են, այն սուրբ և ամենավսեմ նպատակին առատաձեռնութեամբ տալով, իրենց եռանդուն խօսքերը ճշմարիտ գործքերով վաւերացուցին։

Թէև ընկերութիւնը դեռ փոքր և միայն 10 անդամներէ կը բաղկանայ, այսու ամենայնիւ չատ յուսով և եռանդով կ'աշխատին։

Այս փոքրիկ ընկերութեան նպատակը և կանոնները ինծի աւելի հաճելի երեւցան, և զայս յիշել կ'ուզեմ։— Անոր նպատակը երկուքի բաժնուած է. մէկը անձն, միւսը ազգն է։ Իրենց տուրքին մէկ մասը ընկերութեան անդամոց ապագային, թէ հիւանդութեան և թէ չքաւորութեան ատեն անոնց օգնելու համար պիտի գործածուի. իսկ միւս մասը պիտի պահուի մինչեւ հայրենեաց ազատութեան գործնական մասին սկսելու օրը, երբ պանդայէն առնուելով պիտի տրուի այն սուրբ գործին չահին համար. ըսել է թէ հիմա հոս կամ հոն տալով չպիտի վատնուի, բայց գումարուելով պատրաստ դանձ մի պիտի ըլլայ այն բաղձալի օրուան համար։

## ՆԱՄԱԿ ՈՒՈՒՍՏԸՐԷ

*Ուստըր, Ապրիլ 8, 1894*

Սբ. Զատիկը մօտեցաւ: Ինչպէս շատ տարիներ նոյնպէս այս տարի ալ մեծ եռանդեամբ պատրաստուում են տօնել այդ մեծ օրը յորում կեանքը յաղթեց Մահուան: Եւ ի՞նչ է այդ պատրաստութիւնը և վիճաբանութիւնն որ այս օրից սկսում է. բնաբանն է «կեր արբ և ուրախ լեր:» Առաւօտուն ժամը 10ին սկսեցաւ որուն ես ալ բարեբաղդութիւն ունեցայ ներկայ գտնուելու, խոհարարը սկսեց գրել.— 10 տոլար գարեջուր, 2 տ. խնձորիջուր, 2 տ. գինի, 10 տ. երկու գառ, 4 տ. երկու Հնդկահաւ և 18 տոլարի ալ այլև այլ բաներ:

Ահա այդ մեծ օրուան խորհրդաւոր տօնը, որուն կը պատրաստուի հայ տարրը, ոչ միայն տեղւոյս այլ և ամեն տեղի Հայու վիճակն է այս:

Մենք պանդուխտքս, որ կը բնակիմք տուներու մէջ ընկերներով, կրնանք ազգին լաւ օգուտ բերել նաև վնասել. մեծ վնասը այսէ որ աւելի խելահասք իրենց ոյժը և միտքը տուած են վերոյիշեալ պատրաստութեանց, և աւելի յոռին սա է որ ամէն օր թղթախաղով կը պարապին փոխանակ ընթերցմամբ պարապելու և բարի օրինակ հանդիսանալու նոր սերնդին:

Հայի վիճակը անտանելի է, որի դարմանը մեզմէ կը սպասուի, պէտք է մեզ հեռանալ ամեն տեսակ մոլութիւններէ և պարապիլ ընթերցմամբ որուն կարօտ ենք: Կը յիշեմ Հայրիկի մէկ խօսքը որ կ'ըսէ, «խմբագիրք, դուք որ հրապարակախօս մունետիկ էք, գրով և թղթով վարեցէք զժողովուրդն իմաստասիրութիւն և քաղաքակրթութիւն, բանալով զմիտս նոցա ընդունիլ զլաւն և խորշիլ վատէն:» Արդ երբ խմբագիրք իրենց պարտքը խղճի մտօք կը կատարեն, մենք ժողովուրդս ի՞նչ կարող ենք ընել: Միթէ Հայրիկի խօսքը միայն խմբագի՞րք լսելու են, ի՞նչու մենք չենք լսեր որ կ'ըսէ, օգնեցէք գրասէր, աշխատասէր մշակաց որ զլոյսն ի լոյս հանեն. ուստի դառնալով մեր հայրենակցաց կ'ըսեմք, ճշմարիտ Հայն նա չէ որ իր փորը տոլմաներով և փլաւներով տռաքի, այլ նա է որ այդպիսի գումարներով ազատախօս խմբագրաց օգնէ որ լոյս կը մատակարարեն:

Շ

### UNITED FRIENDS OF ARMENIA

### ՄԻԱՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՊՈՍԹԸՆ

Այս անուամբ նոր ընկերութիւն մի կազմուած է Պոսթընի մէջ որոյ նպատակն է Ամերիկայի հանրութեան ծանօթացունել Հայոց գրականութիւնն, ժողովրդական առակներն ու առածներն, կրօնն, պատմութիւնն և ներկայ վիճակն:

Այս համակրելի և բարենպատակ ընկերութեան պաշտօնեայք են

Նախագահ— ՏԻԿԻՆ ՃԻՈՒԼԻԱ ՈՒՕՐՏ ՀՕՒ:

Դեր-Նախագահք— ՊԱՏ. Է. Է. ՀԷՅԼ, Վ. Ա., ՕՐԻՈՐԴ ԱԼԻՍ ՍԹՈՆ ՊԼԷՔՈՒԷԼ, ՊԱՏ. ՖՐԱՆՍԻՍ Կ. ՓԻՊՈՏԻ, Վ. Ա., ՃՕՐՃԷԹ ՀԷՆՐԻ ԱԼԼԷՆ, Վ. Օ., ԽԱԶԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՊԱՏ. Ս. Ճ. ՊԱՐՐՈԶ, ԳԱՌՆԻԿ ԷՔՍԷՐՃԵԱՆ, ՀԷՆՐԻ Պ. ՊԼԷՔՈՒԷԼ, ՈՒ. Տ. Մք ՔՐԱՔԷՆ:

Քարտուղար— Մ. Հ. ԿԻՒԼԷՋԵԱՆ:

Գանձապետ— ՈՒՄ. ԼՈՅՏ ԿԷՐՐԻՍԸՆ,
53 Federal St., Boston, Mass.

Շնորհաւորելով այս նոր միութիւնն՝ կը մաղթեմք լիուլի յաջողութիւն:

### THE METHODIST TIMES

### ԼՈՆՏՈՆԻ ԼՐԱԳԻՐՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Prof. Joseph Agar Beet շարք մի յօդուածներ հրատարակեց վերոյիշեալ շաբաթաթերթին մէջ The Christians of Armenia խորագրին տակ: Այս յօդուածներ գրելու շարժեցաւ Տէր Պիթ՝ Մեթոտիսթ Րիլու անուն ուրիշ թերթի մի անճահ քորոըր յարձակումէն ի վերայ Փրոֆէսոր Թումայեանի, զոր յանցաւոր ցուցնել կը ջանար իբրեւ յուզիչ, ապստամբ և Թրքին դէմ խաչակրութեան քարոզիչ:

Փրոֆ. Պիթ ուրեմն կ'իջնէ յասպարէզ և կը ցուցնէ նախ թէ Հայոց «ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿՆ» աննկարագրելի կերպով խեղճ ու թշուառ է շնորհիւ Թուրք կառավարութեան որ ոև է պաշտպանութիւն չընծայեր նոցա և ամեն կերպով կը նեղէ, կը խուզարկէ, կը բանտարկէ և կը կողոպտէ:

Հեղինակն ի հաստատել զայս ամենայն՝կը դիմէ Տիկին Պիշըվի ծանօթ գրոցն, այն Տիկնոջ որ1891ին հրատարակեց իբրեւ ականատես վկայ ինչ որ տեսած էր Հայաստանի մէջ իւր ուղեւորութեան միջոցին։

Տէր Պիթ իւր երկրորդ յօդուածին մէջ կը նշանակէ «ԴԱՐՄԱՆՆ»։ Իբրեւ օրինակ կը ցուցնէ զՊուլկարիա, որ Թրքի լծէն ազատելէն ի վեր բոլորովին նոր երկիր մի եղած է և մեծ ու կարի գոհացուցիչ յառաջդիմութիւն կ'անէ, «կեանք և ստացուածք ապահով են, արդարութիւնը լաւ կը մատակարարուի, իշխանութեանց պատասխանատուութիւնն հանրային կարծեաց առջեւ լիովին կը ճանչուի, և մամլոյ ու հրապարակային ժողովներու իրաւունքն կը վայելեն... ունին լաւ դպրոցներ և լաւ ճանապարհներ...»։ Նոյնպիսի տարբերութիւն կը տեսնուի բոլոր այն երկիրներուն մէջ որք Թրքական բռնապետութենէ ազատուած են—ի Ռումանիա, ի Յունաստան, ի Սերպիա։

Երրորդ յօդուածին մէջ հեղինակն կը ցուցնէ թէ «Ի՛ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄՔ ԱՆԵԼ» (Անգլիացիքս։) Դժբաղդաբար, կ'ասէ, Հայք, աննման Պուլկարաց, ցրուած են Հայաստանի մէջ և անկէ դուրս, և մեծամասնութիւն չեն կազմեր, սակայն յառաջադէմ ցեղ են։ Ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ, եթէ լաւ պաշտպանուին, արեւելեան Փոքր Ասիոյ ապագայն նոցա կը վերաբերի։ Լիբանանի ինքնօրինութիւնն իբրև օրինակ ցոյց կուտայ, ուր քրիստոնեայ է կառավարիչն 1860ի դէպքէն ի վեր, և կ'ասէ թէ Նոյնպիսի կարգադրութիւն մի կը պատշաճի Հայոց վիճակին։ Յառաջ կը բերէ Նուպար Փաշայի բարեկարգական ծրագիրն Հայկական գաւառաց համար։

Ի՞նչպէս կարելի է Նուպար Փաշայի առաջարկներն կամ անոր նման ծրագիր մի իրագործել։ Ոչ բարոյական համոզողութեամբ։ Խրիմի պատերազմէն ի վեր փորձք ապացուցին թէ Թուրքն բարեկարգութիւն չի կրնար անել։ Ամեն գաւառ որ ազատուած է, ազատուած է բռնութեամբ։ Բայց անպատճառ արիւնահեղութիւն պէտք չէ։ Տէրութիւնք պէտք է որ համաձայնին իրարու մէջ և յայտնեն իրենց պայմաններն առ Դուռն, և սա չէ կարող միացեալ Եւրոպիոյ հրամանին դիմադրել։ Հեղինակն այն եզրակացութեան կուգայ թէ Անգլիական ժողովուրդն պարտի ստիպել Անգլիական Կառավարութիւնն ջանալ Եւրոպեան Տէրութեանց այնպիսի միացեալ գործողութիւնն յառաջ բերելու որով Դուռն ստիպուի տալ հարկաւոր վարչական փոփոխութիւնն հայաբնակ գաւառաց։

## ԱՆԿԼՕ-ԱՐՄԷՆԻԷՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեթոտիսթ Թայմզի կողմէն տեղեկագրիչ մի տեսնուած է Անգլեհայկական Ընկերակցութեան Մեծ. Նախագահին հետ — Տէր Ֆրանսիս Ս. Սթիվընսընի, որ Եւրոպեան ցամաքն այցելելէն նոր վերադարձած է, Բարիզի Հայրենասիրահան Յանձնախմբին Նախագահ Մեծ. Տէր Յ. Իսկէնտէրի հետ ևս խորհրդակցած լինելէ յետոյ։ Թայմզի ներկայացուցչին հետ այս տեսակցութեան մէջ Տէր Սթիվընսըն բազում տեղեկութիւններ կուտայ Հայոց դատին նպաստաւոր, դէմ կը խօսի «Բիքորբրի» անիրաւ յարձակմանն, կը բացատրէ թէ ինչ բարեկարգութեանց պէտք ունին Հայկական գաւառներն, կը գովէ Տէր Պիթի յօդուածներն, կը ցուցնէ թէ ինչ մտօք կրօնական է Հայոց դէմ եղած Թրքական հալածանքն, և վերջապէս կը յայտնէ թէ Ա. Ա. Ընկերակցութիւնն իբրև կուսակցական խնդիր ձեռք առած չէ Հայկական խնդիրն, զի Անգլիական ազգին պատիւն իսկ գրաւի դրուած է Թըրքահայոց խնդրոյն համար։

Ա. Ա. Ընկերակցութեան վերջին ժողովին մէջ միաձայն քուէարկած են շնորհակալութիւն առ Պատ. Հ. Փրայս Հիւկէս և Փրոֆ. Ճ. Ակար Պիթ վասն պատուական պաշտպանութեանն զոր Մեթոտիսթ Թայմզի մէջ արած էին հայ կղերին ու աշխարհականին։

## ԹԷ ՈՐՔԱՆ ՀԱՅ ԿԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՄԷՋ

Ոմանք կ'ասեն ու լրագրաց ալ գրած են թէ Ամերիկայի մէջ 10,000 Հայ կայ։ Մեք շատ անգամ բարեկամաց հետ հաշուի նստած եմք և չեմք կրցած 5,000ն անցնիլ, և հազիւ կրցած եմք այդ թուոյն հասնիլ՝ քիչ մի լայն բռնելով չափն։ Այս օրերս գրեցինք մեր թղթակցաց և նո-

բագոյն տեղեկութեանց համեմատ որք ճշդամերձ են ամենամեծ մասամբ, կը դնեմք հետեւեալ թիւերն։

| | |
|---|---|
| Նիւ Եորք | 700 |
| Շրջակայք Նիւ Եորքի, (Պրուքլին, ճէրզի Սիթի ևն) | 300 |
| Ուուստր | 700 |
| Բրովիտէնս | 400 |
| Պոսթըն և Քէմպրիճ | 400 |
| Լորէնս | 350 |
| Լին | 250 |
| Լոէլ | 200 |
| Սէյլմ և Փիպոտի | 100 |
| Ֆիլատէլֆիա | 100 |
| Մոլսըն | 100 |
| Հէյվերհիլ | 75 |
| Հուայթնովիլ(՞) | 75 |
| Ուունսոքէթ | 75 |
| Շիքակոյ | 110 |
| Թրոյ | 70 |
| Քալիֆորնիա | 500 |
| Այլ և այլ տեղեր | 495 |
| Գումար | 5,000 |

Կը խնդրեմք մեր արդոյ թղթակիցներէն մեզ ծանուցանել եթէ վերոյիշեալ թիւերուն մէջ ուէ խոշոր անճշդութիւն կայ։

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

# ԳՈՐԾԱՒՈՐԱՑ ՎԻՃԱԿՆ

Գործաւոր կամ բանւոր դասն միշտ ստուարագոյն մասն կազմած է երկրի վերայ, և այսօր ալ նոյնպէս է քաղաքակիրթ աշխարհի մէջ։ Գործաւորաց տնտեսական, իմացական, բարոյական կամ ընկերական կացութիւնն այսօր աւելի քան երբէք քննութեան և հոգածութեան նիւթ է։

Ներկայ յօդուածով պիտի քննեմք խնդրոյն այն կէտն թէ գործաւոր դասուն վիճակն հետզհետէ կը վատթարանա՞յ թէ կը բարւոքի։

Հին աշխարհին մէջ գործաւոր դասն ստրի էր, անձնական ազատութիւն չունէր, ստացուածատէր չէր կրնար լինիլ, և իրրեւ վաճառք կրնար վաճառուիլ, արտածուիլ և կոտրտուիլ։ Գերութեան յաջորդեց սէրֆութիւն, որ բաղում նկատմամբ բարձր էր գերութենէ կամ ստրկութենէ, զի սէրֆն թէև իւր մշակելու հողին կապուած էր, աւելի անձնական ազատութիւն և յարգանք կը վայելէր, և չէր բոլորովին զուրկ սեպհականութենէ։ Սէրֆութիւնն ևս վերջին դարերուս մէջ եւրոպական երկրաց մէջ հետզհետէ վերջացաւ, և այժմ գործաւորն անձնական կատարեալ ազատութիւն կը վայելէ, կը գործէ կամ չի գործեր, մէկ գործարանէ ի միւսն, մէկ քաղաքէ ի միւսն, և նոյն իսկ երկրէ յերկիր կերթայ աւելի թոչակ առնլու համար, կը հաստատէ միութիւններ, կը կազմաւորէ գործադուլ, ըստ հաճոյս կ'ամուսնանայ և ընտանեաց գլուխ կը լինի, քուէարկութեան կը մասնակցի, բանակին մէջ կը ծառայէ, զանազան հանրային պաշտօններու ընտրելի է, և՝ ի մի բան՝ կը վայելէ ազատութիւն և արտօնութիւններ որք աշխարհի պատմութեան մէջ բոլորովին նոր երեւոյթներ կը կազմեն։

Գործաւորք դժգոհ են սակայն իրենց վիճակէն, կամ թէ ոմանք կը սովրեցուցեն նոցա դժգոհութեան կետեր։ Գործաւորք դրամագլուխ, գործիներ և խանութ չունին և չեն կրնար իրենց հաշուոյն գործել, որպէս զի իրենց աշխատանքի ամբողջ շահն իրենց մնայ։ Դրամագլխոյ տէրն (քարիդալիսդ) զնոսա կ'աշխատցունէ, և տալով նոցա լոկ ապրուստի համար բաւական թոչակ, ինքն իւր դրամագլխոյ վերայ շարունակ կը բարդէ աւելորդ շահն։

Ոմանք կ'ասեն թէ դրամատէրն այս կերպով աշխատաւորին քրտանց արդիւնքն ըստ մասին յափշտակած, գողցած կը լինի, և դրամն սակաւաւորաց ափին մէջ տակաւ դիզուելով՝ գործաւորք կը զրկուին նիւթական գոյութենէ որով և իմացական և ընկերական զարգացման միջոցներէ։

Այս դանդատ բոլորովին անտեղի չէ։ Գործաւորաց վիճակն դեռ աւելի և աւելի բարւոքման կարօտ է։ Մեքենայից և շոգւոյ շնորհիւ աշխատանքի մէջ գործուած ահագին յեղափոխութիւններն իրենց համապատասխան օրէնսդրական բարեփոխութիւններ ալ կը պահանջեն։ Բայց խնդրոյն մէկ կամ միւս կողմն միայն դիտելով մարդիկ թիւր եզրակացութեան կը յանգին։ Պէտք է խոստովանիլ թէ արդէն օրէնսդրական կարեւոր փոփոխութիւններ գործուած են և աւելի ևս գործուելու վերայ են։ Մեքենական յառաջ-

դիմութեանց և օրէնսդրութեան ու ընկերական կարգաց միջև կատարեալ ներդաշնակումն յանկարծ չի կրնար լինիլ, տակաւ առ տակաւ պիտի լինի։ Հետզհետէ տուրքերն կը վերնան այն ապրանքներու վերայէ զորս գործաւորք կը սպառեն գլխաւորապէս, և աւելի տուրքեր կը դրուին դրամագլխոյ վերայ, ժառանգութեան վերայ, ուղղակի եկամտից վերայ։ Կառավարութիւնն հետզհետէ աւելի կ'առնու հարուստ դասէն և աւելի կը ծառայէ գործաւոր դասուն։ Անգլիա տարին 15 միլիոն ոսկի ծախք կ'անէ հանրային կրթութեան համար, որոյ մեծագոյն մասն գործաւորաց համար է։ Նոյնպէս է ի Գերմանիա, ի Ֆռանսա, յԱմերիկա և այլ բազում երկրաց մէջ։ Կառավարութիւնն նոյնպէս կը շինէ կամուրջներ, ճանապարհներ, դպրոցներ, գրատուններ, կը հատատէ առողջապահական հսկողութիւն տներու և գործարանաց վերայ, տղոց և կանանց աշխատութեան հասակ և ժամանակ կը սահմանէ, ձրի պատուաստ կ'անէ, հիւանդանոցներ և ծերանոցներ կը կառուցանէ — այս ամենն գործաւոր հանրութեան համար են գրեթէ բոլորովին, քանզի հարուստներն արդէն դիւրութիւն ունին իրենք իրենց հոգ տանելու։

Վիճակագրական թուանշաններ ալ կը ծառայեն ցուցնելու թէ գործաւորաց վիճակն այժմ շատ աւելի բարւոք է քան 50 տարի առաջ։ 50 տարիէ ի վեր գործաւորաց թոշակն աւելցած է մէկ կողմանէ և ուտելեաց ու զգեստուց գինն նուազած է միւս կողմանէ, որպէս անգլիացի Ռոպէրդ Կիֆֆրնի աշխատասիրութենէն կը տեսնուի։ Արհեստներու մեծագոյն մասին համար թոշակներն այժմ հարիւրին 50 աւելի են, և ոմանց համար 0 աւելի են քան 50 ամօք առաջ։ Ոստայնանկներն (weavers), օրինակի համար, 12 շիլլինի փոխանակ այժմ 26 շիլլին կ'ընդունին։ Հողագործութեան մէջ թոշակք 60 առ հարիւր բարձրացած են։ Ցիշել պէտք է թէ միանգամայն աշխատանքի ժամերն ալ նուազած են։ Նուազած են նաև պիտոյից գիներն։ Շաքարն այժմ եռապատիկ աւելի ածան է քան 50 տարի անաջ։ Մսեղինաց գիներն քիչ մի բարձրացեր է, բայց դորա պատճառն ալ այն է որ գործաւորք այժմ շատ միս կ'ուտեն և լաւագոյն տեսակէ կ'ուտեն։

Միացեալ Նահանգաց մէջ ևս վիճակագրութիւնք նման թուանշաններ կը ներկայացուցանեն։ Մասաչուսէցի Պիւռօն 1885ին հաշիւ տուաւ թէ 1835էն ց1862 թոշակք 52 առ հարիւր բարձրացած էին մինչդեռ գինք 12 առ հարիւր միայն։ 1862 էն ց1878 թոշակք բարձրացած էին 24 և գինք 14 առ հարիւր։

Գերմանիոյ մէջ կատարուած վիճակագրութիւնք կը ցուցնեն թէ մարդ գլուխ եղած սպառումն 1840էն ց1881 շատ աւելցած է։ Օրինակի համար կարագ և պանիր վեցպատիկ աւելի կը սպառին. 3 ու կէս հաւկիթի փոխանակ 21 կ'ուտեն. 1 փաունտ բրինձի փոխան 16 փաունտ, իսկ ցորենի ալիւր հինգպատիկ աւելի կը ըսպառի։ Սուրճ կրկնապատիկ աւելի։

Սպառմանց կամ ծախմանց այս աճումն մարդ գլուխ հաշուով է, և որովհետև սպառողաց յոյժ ստուար մեծամասնութիւնն գործաւորք են, ուրեմն գործաւորք շատ աւելի կը սպառեն քան 50 ամօք առաջ։

Նոյնպէս տարբերութիւն կայ նաև զգեստեղէնի մասին։ Սպառուհիներու և գործաւորուհիներու զգեստներն յաճախ տիրուհիներու զգեստին նման են։ Իսկ երբ գործաւորի մի ընտանեաց այցելես, հաճութեամբ կը տեսնես որ էական պէտքերու քով կը գտնուին նաև ճոխութեան նշաններ, պատկերներ, լուսանկարներ, հայելիներ, խաղի և զբօսանաց առարկայք են։

Վերջապէս յիշեմք նաև թէ սխալ է այն յեղյեղուած գանգատն թէ գործաւորք առ հասարակ լոկ ապրիստի միջոց ունին և վաղուան համար դառն անստուգութեան մէջ են։ Խնայողական դրամատանց հաշիւներէն կերևի թէ այժմ գործաւորք շատ աւելի դրամ կրնան խնայել և պահել։ Մէկ վիճակագրութիւն մի կը ցուցնէ թէ 1831ին 429հազար անհատք 13 միլիոն անգլիականոսկի ունէին խնայողական դրամատանց մէջ յԱնգլիա. 1881ին 4միլիոն 140հազար անհատք ունէին 80 միլիոն ոսկի։

Ինչ կը հետևին այս ամենէն—այն թէ կը սխալին այնք որ շարունակ կը գանգատին և արմատական, յեղափոխական մեծամեծ միջոցներ կը ջատագովեն գործաւորաց ի նպաստ և ընդդէմ դրամատեարց. յեղափոխութեան պէտք չկայ.

բարեփոխութիւնն բաւական է, որ արդէն կամաց կամաց իդործ կը դրուի բոլոր եւրոպական երկրաց մէջ։ Փոխանակ գործաւորաց ոժդոհութիւնն անդադար գրգռելու, պէտք է յորդորել որ գէշ և շըռայլ գործաւորք հետեւին ժիր և տնտես գործաւորաց օրինակին, և հանրային վարժարաններէն, գրատուններէն, ազան գրքերէն ու լրագիրներէն օգուտ քաղեն փոխանակ գինետուններն յաճախելով թշուառանալու և իրենց կամածին թշուառութիւնն ընկերութեան վերայ բառնալու։

## ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿՆ ՊԷՏՔ Է ԿԱՐԴԱՑՈՒԻ

Ծանօթ է թէ Սր. Աշըգեան պատրիարքն չուզեց կամ մանաւանդ չկրցաւ Թուրքիոյ Հայ եկեղեցեաց մէջ կարգալ տալ վեհ. Հայրապետին անդրանիկ կոնդակն։ Բ. Դուռն չուզեց որ Հայ ժողովրդի մխիթարութիւն և սրտապնդում բերող այդ կոնդակ, ազգի Հայրիկին այդ նամակ, կարդացուի յեկեղեցիս։ Ի՞նչ կը նշանակէ Դրան այս նոր յիմարութիւնն. միթէ Խըրիմեան Հայրիկ Թուրքիոյ Հայոց կաթողիկոսն չէ՞. միթէ Դրան թոյլտուութեամբ Թուրքիոյ թեմերն պատգամաւոր չյղեցի՞ն յիշմիածին և չքուէարկեցի՞ն կաթողիկոսի ընտրութեան համար։ Իրաւ է թէ քուէարկեցին ոչ որպէս Դուռն կը բաղձար և կը սպասէր. և այժմ կոնդակի ընթերցման դէմ դնելով կուզէ ասել թէ չընդունիր Խրիմեանի ընտրութիւնն իբրեւ Թուրքիոյ Հայոց կաթողիկոս։ Սակայն Զարը ընդունած է. և այժմ խնդիրն Ամենայն Ռուսաց կայսեր և Սուլթան Համիտի միջեւ պէտք է լուծուի։ Թէ ո՞րն որում կը յաղթէ, այդ արդէն յայտնի է։

ՄՇԱԿի մէջ կը կարդամք հետեւեալ տողերն— «մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Սինոդը դիմել է ուր հարկն է, որպէս զի կաթողիկոսական անդրանիկ կոնդակն հասցնեն Թիւրքայ Հայաստան, այն տեղի թեմական հոգեւոր իշխանութիւններին։»

## ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

Ուստերէն կը գրեն մեզ Ապրիլ 24 թուով—

Թելի գործարանին դուռն ,ըստ սովորութեան գործաւորք առաւօտուն գացեր կանգներ էին՝ գործ ստանալու յուսով։ Հայերու թիւն 10 էր, ուրիշներունը 100ի չափ կար։ Ինչպէս եղաւ կռիւ մի փրթաւ, իրարու կը զարնէին։ Մալաթիացի Հայու մի սրունքն կոտրեցաւ ծեծին մէջ. կոտրողն ուզեց փախչիլ, բայց Հայերը թող չտուին, փողոցը խափանեցին փախստականին դէմ, մանաւանդ մէկը ճաղերէն մէկ հատ կոտրեց առաւ ձեռքը և զարնելով փախոյց բոլորը։ Ոստիկանք եկան բռնեցին կռուողներուն դլխաւորներն։ Յաջորդ երկուշաբթի օրն դատ տեսան, Ֆինլանտին մէկէն 15 տոլար տուգանք առին, փոյտով զարնող Հայէն ալ 15 ուզեցին, բայց սա չուզեց վճարել, այլ 50 տոլարի գրաւական ձգելով դատին վերաքննութիւնն պահանջեց։ Իսկ այն Ֆինլանտը որ Հայուն սրունքն կոտրած էր 500 տոլարի պէյլ կամ երաշխաւորութիւն տուաւ։ Հայուն կոտրած սրունքն կտրել ուզեցին, սակայն ինքը չհաւանեցաւ։

—Լոնտոնի Տէյլի Նիւզին կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ Պատրիարք Աշըգեան հրաժարական յղած է Բ. Դուռն, պատճառ ցուցնելով պաշտօնին յարաճուն դժուարութիւններ։

—Սուլթան Համիտ մտադիր է Եւրոպա ճանապարհորդել. նորա մերձաւորներն ալ լաւ կը գտնեն այդ միտքն և Սաիտ փաշան ալ, ըստ լրագրոց, կարծիք յայտնած է թէ այդ ուղեւորութիւն օգտակար կը լինի Թուրքիոյ շահերուն։

—Նուպար Փաշայի Եգիպտոսի նախարարապետ կարգուելուն առթիւ Փռանսական «Թան» լրագիրն գովեստիւք կը խօսի այդ հայ քաղաքագիտին ընդունակութեան, փորձառութեան, իմաստութեան և ողջմտութեան վերայ։

—«Մշակ» մասնաւոր նամակէ մի ստացած է հետեւեալ լուրն— Բասենի Դալի-Բաբա գիւղի Օհանի տունն օր ցերեկով մի քանի հրոսակներ կը պաշարեն և չափազանց փողի պահանջներ կ'անեն։ Օհան աղան կը մերժէ նոցա պահանջն։ Հրոսակաց մին ատրճանակով կը կրակէ Օհան աղային, բայց վէրքն անվնաս է։ Հրազինուն պայթիւնն դուրս կը բերէ տանտէրոջ տղայքն, որք տեսնելով զհայր վիրաւորուած, կը սկսին մարտնչիլ հրոսակաց հետ և կռուին մէջ երկու ֆուրդ կը ըսպաննեն։

## Գ. ՏԷՕՐՄԷՃԵԱՆ

ՑԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱԼ
Ի ՌՈՒՍՃՈՒԿ

Պատիւ ունի ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ պատուարժան ազգայնոց թէ՝ բացի ամեն տեսակ (հայ լեզուաւ) գրեանց և զանազան պատկերներու յանձնակատարութենէ՝ ստանձնած է նաև գործակալութիւնն հետեւեալ հրատարակութեանց.

ԱՐԱՌՍ վեցամսեայ պատկերազարդ. ՀԱՅԿ կիսամսեայ հանդէսներու և ՀԱՅՐԵՆԻՔ ամենօրեայ թերթի։

Ցանձնակատարութիւնք կը կատարուին արագ և կանոնաւոր կերպով։

Վճարմունք կանխիկ են։

Հասցէ— K. DEUKMEJIAN
Roustchouk, BULGARIE

---

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

## Յ. ԷՔԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS

30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոհողութիւններ անեմք։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել՝ դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գներով։

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխաննենք։

---

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

# NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

## ԸԱԳԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՂ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

---

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

---

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։




191 FRONT Փողոց, Worcester, MASS.

*Ստեփան Փ. Բրուտեանս, պատիւ ունիմ ծանուցանելու իմին ազգայիններուս թէ առանձինն խանութ մ'ունեցած եմ քանի մը շաբաթներէ ի վեր և կը պահեմ ամեն տեսակ ժամացոյցներ զուտ ոսկի, ոսկեզօծ և արծաթ. Նաև ամեն տեսակ ոսկեզօծ շղթաներ և ոսկի մատանիներ և որ ըստ կարգին. Նաև ամեն կարգի խաչեր ժամացոյցներ թէ պատի և թէ բաֆիյարմար մօտս կը գտնուին, և կը վստահացուցնեմ թէ խիստ չափաւոր գներով կըրնամ վաճառել։ Ազգայնոցս մասնաւոր զեղչ կ'ընեմ որևէ ապրանաց համար որք մօտս կը գտնուին.*

*Նաև ամեն տեսակ ժամացոյցներ թէ ամերիգական և թէ եւրոպական կը նորոգեմ խիստ չափաւոր գներով և լաւագոյն կերպով և կերաշխաւորեմ մէկ տարի։*

*ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ*

---

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

*Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով*

---

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև


*«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Դասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։*

---

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, *Նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.*

---

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

*Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։*

---

## ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

*Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։*

*Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։*

---

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 *դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։*

---

*«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 189 . գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։*

---

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ